«ԵԿԱՅՔ ՇԻՆԵՍՑՈՒՔ ՍՈՒՐԲ ՁԽՈՐԱՆՆ ԼՈՒՍՈՅ»

1999 թ. հուլիսի 18-ին, Շիրակի թեմի Ազատան գյուղում մեծ տոնախմբություն էր: Հավատացյալների առջև իր դռներն էր բացել տասնամյակներ առաջ փակված գյուղի Ս. Ստեփանոս և այժմ Ս. Հարություն վերանվանված եկեղեցին: Եկեղեցու հարավային դռան վերնամասում կա մի արձանագրություն, որում ասվում է, որ այս եկեղեցին կառուցվել է 1460 թ. և նորոգվել 1865 թ.:



Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հիշատակին նվիրված խաչքարը Ս. Հարություն եկեղեցու մուտքին

Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանի գլխավորությամբ կատարվեց Դոնբացեքի կարգը: Այնուհետև Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հրավիրված Տ. Արսեն արքեպս. Բերբերյանը վերանվիրագործեց և Ս. Պատարագ մատուցեց վերաբացված Ս. Հարություն եկեղեցում: Սրբազան արարողությունից հետո արարողապետ Գերաշնորհ Սրբազան Հայրը ոգեշունչ խոսքով դիմեց ազատանցի հավատացյալներին՝ ընդգծելով եկեղեցու պատմական ու կարևոր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ ի մասնավորի նշելով. «Եկեղեցին մեր կյանքի հանգստյան կայանն է, ուր ծաղկում են երջանկության վարդերն ու շուշանները: Մարդիկ երջանիկ են այն չափով, ինչ չափով իրենք իրենց նվիրում են Աստծու ծառայությանը, և եկեղեցաշինությունն այդ ծառայությունների մեջ մեծագույններից է: Ուստի «եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»: Ս. Պատարագին մասնակցում էին նաև Մայր Աթոռի միաբաններ Տ. Մակար աբդ. Հովհաննիսյանը, Տ. Արշակ աբդ. Խաչատրյանը, Շիրակի թեմից՝ Տ. Շիրակ քհն. Առաքելյանը, Տ. Թաքուլ քհն. Հակոբյանը, Տ. Արսեն քհն. Սիմոնյանը, սարկավագներ, թեմի քառաձայն երգչախումբը՝ խմբավարությամբ Արամ Աղաբաբյանի, և Էջմիածնի Գևորգյան Հոգևոր ճեմարանի ուսանողներ:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց մատաղի օրհնություն՝ ի հիշատակ հանգուցյալ Վեհափառ Հայրապետի: Մատաղի կազմակերպիչներն էին բեյրութահայ բարերարներ Հարություն և Մարի Արսլանյանները: Հարկ է նշել, որ Հարություն Արսլանյանը, հանգուցյալ Վեհափառ Հայրապետի կոչին ընդառա-

ցելով, իր պատրաստակամությունը հայտնեց վերանորոգելու Ազատանի եկեղեցին՝ հատկացնելով 60000 ԱՄՆ դոլար: Ընդ որում բարերարների որդին և հարսը՝ Գրիգոր և Հիլտա Արսլանյանները, նույնպես իրենց մասնակցությունը բերեցին տարվող աշխատանքներին՝ հոգալով մկրտարանի ծախսերը: Բացի դրանից, նրանք հոգացին նաև անհրաժեշտ միջոցները եկեղեցու սրբապատկերների՝ Աստվածամայրը մանկան հետ, Ս. Հարության, Ս. Ստեփաննոսի, Ս. Գրիգոր Լուսավորչի և եկեղեցու բարեկարգված տարածքում կանգնեցված խաչքարի, որը նույնպես հանգուցյալ Վեհափառ Հայրապետի հիշատակին է նվիրված:

Փառք ենք տալիս Աստծուն, որ որպես հայ քրիստոնյաներ Լուսավորչի տեսիլքով ծնված ժողովրդի զավակն ենք: Ծառայելու կոչումը առաքելություն է: Որքան երջանիկ պիտի զգանք մենք մեզ, որ ծառայության բաժնից մենք էլ ունենք՝ կառուցելու և առավել զորացնելու ու ընդարձակելու Հայ Առաքելական եկեղեցին, որպես անբաժանելի մի մասնիկը Քրիստոսի Եկեղեցու: Ուրեմն մեզ մնում է հրավիրել բոլոր այն մարդկանց, ովքեր պատրաստ են ընդունելու նվիրումի այս վայելքը՝ ծառայելով և հաճելի դառնալով Աստծուն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՅԱՊՈՐՅԱՆ